ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
/ընդհանուր նկարագիր/

Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը (ԳՀԱԿ) գիտական եւ տեխնոլոգիական բնույթի հետազոտական գործունեություն իրականացնող կառույց է, որը գտնվում է Ֆրանսիայի բարձրագույն կրթության եւ հետազոտությունների նախարարության հովանու ներքո: Կենտրոնի գործունեությունն ուղղված է գիտական արդյունքի ստեղծմանը եւ կիրառմանը:

Հիմնվելով ավելի քան 1200 գիտական կազմակերպությունների եւ ծառայությունների վրա, ունենալով 32 000 աշխատակցից ավելի /11600 գիտնականներ, 14 400 ինժեներներատեխնիկական եւ վարչական աշխատողներ/՝ կենտրոնն իր գործունեությունը ծավալում է գիտության բոլոր ոլորտներում:

Կենտրոնի 2008 թվականի բյուջեն կազմել է 3,277 մլրդ եվրո, որից միայն 588 մլն առաջացել է բուն հետազոտություններից:

Ակնառու գիտնականներից շատերն իրենց կյանքի այս կամ այն փուլում աշխատել են ԳՀԱԿ-ի լաբորատորիաներում: Կենտրոնի գերազանց գործունեության մասին է վկայում Նոբելյան մրցանակի 16 դափնեկրի եւ 9 Ֆիլդսի մեդալակրի առկայությունը:

Լինելով Ֆրանսիայի բազմաբնույթ հետազոտություններ իրականացնող հիմնական գիտական կառույցներից՝ ԳՀԱԿ համալիր հետազոտություններ է իրականացնում գիտական, տեխնոլոգիական եւ սոցիալական բնագավառներում:

Ներկայումս Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնն ունի ինն ինստիտուտ, որոնցից 2-ը՝ հանրապետական նշանակության:

Դրանք են.

Քիմիայի ինստիտուտ (INC)

Էկոլոգիայի եւ շրջակա միջավայրի ինստիտուտ (INEE)

Ֆիզիկայի ինստիտուտ (INP)

Միջուկային ֆիզիկայի եւ տարրական մասնիկների ֆիզիկայի ազգային ինստիտուտ (IN2P3)

Կենսաբանական գիտությունների ինստիտուտ (INSB)

Մարդու եւ սոցիալական գիտությունների ինստիտուտ (INSHS)

Մաթեմատիկական եւ հարակից գիտությունների ինստիտուտ (INSMI)

Տեղեկատվական եւ ինժեներական գիտությունների տեխնոլոգիաների ինստիտուտ (INST2I)

Տիեզերքի մասին գիտությունների ազգային ինստիտուտ (INSU):

ԳՀԱԿ մեծ ուշադրություն է դարձնում գիտության տարբեր բնագավառի մասնագետների, գիտական կազմակերպությունների միջեւ համագործակցությանը, ինչը հնարավորություն է տալիս բացայայտել ուսումնասիրության նոր ոլորտներ, բավարարել տնտեսության եւ հասարակության կարիքները:

Յուրաքանչյուր տարի շուրջ 5000 օտարերկրյա գիտնական է հյուրընկալվում ԳՀԱԿ լաբորատորիաներում, իսկ թվով 1714 օտարերկրացի գիտնական կենտրոնի աշխատակիցներ են: ԳՀԱԿ ունի 60 երկրի հետ համագործակցության 85 համաձայնագիր, գիտական համագործակցության 310 միջազգային ծրագիր, համագործակցում է եվրոպական եւ միջազգային 91 կազմակերպությունների, 92 գիտահետազոտական միավորումների եւ լաբորատորիաների հետ, ներկայացուցչություններ ունի Բրյուսելում, Յոհաննեսբուրգում, Մոսկվայում, Պեկինում, Չիլիում, Տոկիոյում, Վաշինգտոնում եւ այլուր: